# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 10-ի նյութական իրավունքի բաժնի 14"46-րդ, 24"55-րդ, 28"64-րդ , 36"45-րդ հարցերը, ինչպես նաև դատավարական իրավունքի բաժնի 8"70-րդ , 14"66-րդ հարցերը:

Նյութական իրավունք

***46-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները բխում է քրեական իրավունքի տեսության փաստական սխալի պարագայում արարքի որակման կանոններից, ուստի տրվում է 1 միավոր:*

***55-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Հետևաբար, հաշվի առնելով, որ մեջբերված իրավադրույթների և եզրահանգումների համատեքստում ընտրված տարբերակը ճիշտ է, ուստի տրվում է 1 միավոր:*

***64-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի այդ հիմնավորումները չեն բխում ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***45-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

Դատավարական իրավունք

***70-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի կողմից քրեադատավարական նորմերի վերլուծությունը թերի է , հիմնավորումն առավելապես կատարվել է նյութական իրավունքի համատեքստում, մինչդեռ անհրաժեշտ էր մեջբերել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

***66-րդ հարցի*** *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի չեն բխում քրեական դատավարության օրենսգրքի 373-րդ մեկնաբանությունից : Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***1959*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 29 միավորը բարձրացնել 3 միավոր՝ արդյունքում արձանագրել 32 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ _____ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

_____ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ